

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնումների գնահատող հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 08-ի N15-2/08.11.21 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման դրույթների կիրառմամբ

Գնանշման հարցման ծածկագիրը՝ **ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/ՁԲ-15-2/08.11.21-ԱՄ**

Պատվիրատուն՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, որը գտնվում է ք.Հրազդան, Գործարանային-1 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **73 հատ ձմեռային բանվորական բաճկոնի** մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Մատակարարման ժամկետ է սահմանվում **տասնհինգ օր՝ պայմանագիրը կնքելու օրվանից:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, ք. Հրազդան, Գործարանային-1 հասցեով կամ էլ. փոստ info@raztes.am:

Հայտերի բացումը տեղի կունենա «ՀրազՋԷԿ» ԲԲԸ ք.Հրազդան, Գործարանային-1 հասցեում, **2021թ. նոյեմբերի 26-ին ժամը 11<sup>00</sup>-ին:**

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մնացականյանին, հեռախոս՝ +374 93 93 22 33:

Պատվիրատու՝ «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ

## Հ Ր Ա Վ Ե Ր

1. Սույն հրավերը տրամադրվում է «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ի կողմից 2021թ. նոյեմբերի 19-ին Տեղեկագրում հրապարակված ՀՁ-ԳՀ-ԱՊՁԲ/ՁԲ-15-2/08.11.21-ԱՄ ծածկագրով գնման գնանշման հարցման մասին հայտարարության հիման վրա:
2. Մրցույթի ծածկագիրը ՀՁ-ԳՀ-ԱՊՁԲ/ՁԲ-15-2/08.11.21-ԱՄ:
3. Գնման առարկայի բնութագիրը՝
  1. Չմեռային բանվորական բաճկոն - 73 հատ.  
Չմեռային բաճկոնը պետք է՝
    - կարված լինի անջրաթափանց՝ մուգ կապույտ գույնի կտորից, ներսից ջերմացված (գույնը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ),
    - լինի կոճակներով/շղթայով և արտաքին գրպաններով,
    - մեջքի վրա ունենա գնորդի լոգոտիպը՝ «ՀրազՁԷԿ» սպիտակ գույնի,
    - հետևի մասում գոտկատեղում, նաև թևերին պետք է ունենա լուսանդրադարձնող կրկնակր արծաթագույն 5 սմ լայնությամբ շերտեր, նույնը նաև առջևի մասում:
    - Ջերմացումը կազմակերպվում է սինտիպոնի առնվազն 250գ/մ<sup>3</sup> խտությամբ:
4. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի ընտրությունը կատարվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:
5. Մրցույթն իրականացվում է մեկ փուլով, մատակարարումն՝ ըստ Կողմերի համաձայնեցված ժամանակացույցի և հայտարարված ժամկետում՝ պայմանագիր կնքելու օրվանից՝ 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:
6. Հայտով ներկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրամով, գրված թվերով և տառերով և ներառում է հաշվարկման կարգը:
7. Հայտով ներկայացված առաջարկված գնի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը, ներառյալ փոխադրումը «ՀրազՁԷԿ» -ի տարածք:
8. Հայտերը կբացվեն 2021թ. նոյեմբերի 26-ին ժամը 11.00-ին նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության, հասցեն՝ «ՀրազՁԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1:
9. Սույն գնման գործընթացում գնահատող հանձնաժողովը ղեկավարվում է Գնումների մասին օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման դրույթներով:
10. Պայմանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո:

11. Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Գլխավոր տնօրենի տեղակալ - գլխավոր ճարտարագետ, գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Մնացականյանին հեռ. (+37493) 93-22-33:

ԳՏՏ-Գլխավոր ճարտարագետ,  
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Ա.Մնացականյան